# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԱՑ

### ՅԸՆԹԱՑՍ 1887 ՏԱՐՒՈՅ

**ԱԴԱՄԵԱՆ** ( Պետրոս). *Շէքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները։ Թիֆլիզ, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի*. 1887։

**ԱՂԱՅԵԱՆՑ Ղ.** *Արեգակնազան կամ Կախարդական աշխարհ. հայկական հին զրոյցներից առած մի վէպիկ։ Թիֆլիզ։*

**ԱՌԱԿԱԳԻՐՔ.** *ինքնագիր և թարգմանածոյ առակներ և երգեր, ժողովրդական լեզուով գրուած։ Ա. Բահաթրեանց.* 1887։

**ԱՌԱՋՆՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂՂԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ.** *ի պէտս Նախնական դասուց ազգային վարժարանաց։ Աշխատասիրեաց Խ. Սիմոնեան։ Կ. Պոլիս, ի տպարանի Ն. Պէրպէրեան.* 1886։

**ԱՌԱՋՆՈՐԴ ԻՏԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ,** *հանդերձ օգտակար խօսակցութեամբք և կարևոր տեղեկութեամբք ի պէտս ազգային վարժարանաց և զարգացեալ դասուց։ Յերիւրեաց Յովսէփ Յ. Գօնթ Պէյ։ Նոր մեթոդով պատրաստեալ։* ի Կ. Պոլիս, *տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան)*, 1886։

**ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՐՔ** *աղջկանց դպրոցաց համար, ազատ թարգմանութիւն Մ. Մամուրեան։ Զմիւռնիա, ի տպարանի Արևելեան Մամլոյ*, 1886։

**ԲԱՌԱՐԱՆ,** *գրաբառէ աշխարհաբառ և ռուսերէն։ Աշխատասիրութիւն Տէր-Աբրահամեանի։ Ռոստով*, 1887։

**ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ,** *Հայերէնէ 'ի Գաղղիերէն։ Աշխատասիրեաց Կոմիտաս Ա. Ռոկեան, ի պէտս ազգային վարժարանաց։* Կ. Պոլիս, *ի տպարանի Նշան Պէրպէրեան*, 1887։

**ԲԱՐԵԿԱՄ ԱՄԵՆԵՑՈՒՆ,** *գրքոյկ բժշկական ըստ հոմիոպաթիք դրութեան։ Աշխատասիրեաց Տր. Յ. Ճ. Կիրակոսեան։* Կ. Պոլիս, *ի տպարանի Արևելք լրագրի։*

**ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ.** *գործ վանահօր Ս. Կարապետի վանաց Երնջակու Սերովբէ եպիսկոպոսի Արարատեան Միաբանի Մայր Աթոռոյ։ Վաղարշապատ, ի տպարանի կաթողիկէ Ս. Էջմիածնի*, 1886։

**ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ.** *ի պէտս ազգային վարժարանաց։ Աշխատասիրեաց Մ. Մօզեան։ Տիկին Բոռ Քարբանթիէ երևելի մանկավարժուհւոյն հետևողութեամբ։* Կ. Պոլիս, *ի տպարանի Նշան Պէրպէրեան*, 1887։

**ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.** *Հատոր Ա. Կենդանային հիւսուածաբանութիւն և Մարդկային կազմախօսութիւն և բնախօսութիւն։ Շարագրեց Տաղուարեան։* Կ. Պոլիս, *տպարան Արամեան*, 1886։

**ԴԻՒՑԱԶՈՒՆՔ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ,** *Թարգմանիչ* Կ. Յ. *Գարակիւլեան։ Հրատարակիչք Նշան Պէրպէրեան և Յ. Տէօվլէթեան։* Կ. Պոլիս, *ի տպարանի* Ն. Կ. Պէրպէրեան, 1886։

**ԴՊՐՈՒԹԻՒՆ** *կամ Զրուցատրական նոր մեթոտ ուսման Ֆրանսական լեզուի, ի պէտս վարժարանաց և ինքնընթեր ուսանողաց։ Գործ Էմիլ Օդդոյի։ Փոխադրեաց*

digitised by A.R.A.R.@

ի հայ ի գերմանացի բնագրէն Եղնիկ Տ. Յովհաննէսեան: Կ. Պոլիս, Յ. Գավաֆեան գրատուն, 1886:

ԶԱՒԵՇՏԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԲՈԺՈԺԻԿԻ: Կ. Պոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան) 1887:

ԶԲՕՍԱՆՔ կամ Հաւաքածոյ գաղղիերէն հատընտիր առակաց, աշխատասիրեաց Տ. Մ. Միրիմանեան. Կ. Պոլիս. 1887:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ Կովկասի համար: Թիֆլիզ:

ԷՆՔՍԼԷՐՃԵԱՆ (Ե.). Մարախ թէ Մարուխ. բանասիրական տետրակ մը որ կը հետազօտէ թէ սրբոյն Յովհ. Մկրտչի կերածը յանապատին մարախ էր թէ մարուխ: Կ. Պոլիս, 1887:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ. հրատարակիչ Միրիմանեան: Թիֆլիզ, Յովհաննէս Մարտիրոսեանի տպարան, 1887:

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ի պէտս դեռահաս մանկանց, վարժարանաց և յանձնարարեալ յՈւսումնական խորհրդոյ ազգային կեդրոնական վարչութեան և հաստատեալ ի սրբազան Պատրիարքէ: Երկասիրեաց Ենովք Թէյեան: Կ. Պոլիս, առ Յովսեփայ Գավաֆեան, 1886:

ԼԷՕ. վէպ թէ պատմութիւն. Ղարաբաղի անցեալը Աւրես Բէկնազարեանցի գրչի տակ: Հրատարակութիւն Վ. Գօզեան: Շուշի, Տպարան Հայոց հոգևոր տեսչութեան:

ԼՈՅՍ ԵՒ ՍՏՈՒԵՐՔ, քերթուածք. Մ. Աճէմեան. Կ. Պոլիս. 1887:

ԽԱՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ, ուղևորութեան 'ի Հայաստան և 'ի Ռուսական Հայաստան. 'ի Կիրակոս Ս. Ղազանճեանէ. Կ. Պոլիս:

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ. յօրինեց Յակոբ Մաթէոսեան: Կ. Պոլիս, տպարան Արամեան (Պաղտատլեան) 1886:

ԾԱՂԿԱՔԱՂ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ և Տօնակատարութիւնք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Աշխատասիրեաց Արիստակէս եպիսկոպոս Գաւթեան. ի տպարանի սրբոյ Էջմիածնի ի Վաղարշապատ, 1887:

ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ և ազգային իրաւաբանական սովորութիւններու: Հաւաքեց և կազմեց Գր. Խալաթեանց: Մոսկուա, Ձուլարան և Տպարան Օ. Օ. Հէրբէկ, 1887:

ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ուղղագրութեան օսմանեան լեզուի: Պատրաստեաց Աբրահամ Մաթէոսեան: Կ. Պոլիս, 1887:

ԿՈՂՈՊՏՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻ. եղերական վէպ, հեղինակութիւն Լումիի (Սէրգէյ Սիմոնովիչ Նազարով): Թիֆլիզ, տպարան Ռօտինեանց, 1880:

ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԸ, համառօտ տեսութիւն Ի. Կոստանեանց: Մոսկով, 1886:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐ. Յօրինեց Վարդան Լիսիցեան: Կանվայի վերայ կարելու համար: Լոյս տեսաւ և ծախվում է կեդրոնական գրավաճառանոցում: Թիֆլիզ, 1887:

ՀԱՆՐԱՀԱՇԻՒ (Ալգեբրա), Տէր Ղուկասեանի և Գ. Մուրատեանի կազմած, և Միքայէլ Պետրոսեան Սափարեանցի հրատարակած: Թիֆլիզ, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1886:

ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ Պետերբուրգից ուղարկուած երկու թղթակցութիւնների առիթով՝ ափպաղական քաղաքութիւններ: Թիֆլիզ, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1887:

ՀՐԱՀԱՆԳ քննութեանց և ստուգելոյ զվաւերականութիւն պսակաց և ծննդոց և զանցառութեան և անկանոն գրուածոց յարձանագրական մատեանս. գրեալ ի վերայ հիման օրինաց ի Յովհաննէս աւագ քահանայէ Զիժովսկւոյ. Թարգմանութիւն Սարգիս քահանայի Մաքսիմոճեան: Ռուսով (Դօնի վրայ): Տպարան Յովհաննու Տէր Աբրահամեան, 1886:

ՂԵՒՈՆԴԵԱՅ մեծի Վարդապետի Հայոց Պատմութիւն: Հրատարակութիւն Թիֆլիզի ընկ. հայերէն գրքերի: Թիւ 21: Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, 1887: Ի յաւերժական յիշատակ ազգասէրի Յովսեփայ Իզմիրեանց Ղրզլարեցւոյ:

ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ. Դասախօսութիւն 1883–1885 Տփխիսու Սուրբ Գայիանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարաններում: Վերաքննած և լրացրած բժշկապետ Գրիգոր Գասպարեան Տէր Գրիգորեանցի Ղզլարեցւոյ: Թիֆլիզ, տպարան Մովսիսի Վարդանեան, 1887:

ՄՈՎՍԷՍ Խորենացի և հին հայկական վէպ (Էմին). Ռուսերէնից թարգմանեց Խաչատուր Յովհաննիսեանց: Թիֆլիզ, տպարան Յովհ. Մարտիրոսեանցի, 1887:

ՄՈՎՍԻՍԵԱՆ (Յուսիկ Վ.). Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցւոյ պատմութիւն: Վաղարշապատ, ի տպարանի կաթողիկէ Ս. Էջմիածնի, 1886:

ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹԸ և խաչին վրայ ճառ: Շարադրեց Խրիմեան Հայրիկ: Կ. Պոլիս, 1887:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (Յովհաննէս), Բանաստեղծութիւններ: Մոսկուա, Զուլալեան և տպարան Օ. Օ. Հէրբէկ. 1887:

ՆԱՄԱԿԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ, ուղղեալ առ երիտասարդս... Ա. Նամականի առերիտասարդս: Յիմաթէոսի Դիքզոնի ամերիկացւոյ: Կ. Պոլիս, տպարան Արամեանի:

ՆՈՐ ՏԱՐԻ, կամ փոքրիկ ծաղկաքաղ հատընտիր բանաստեղծութեանց: Հաւաքեց Յարութիւն Արսենեան Կ. Պոլիս, 1887:

ՆՈՐ ՑԱՒ. Մի հասարակ մարդու յիշողութիւններից: Գրեց Սկայորդի: Շուշի. ի տպարանի Միրզաջան Մահտեսի Յակոբեան, 1886:

ՆԵՆԳ ԵՒ ՍԷՐ, դրամա 5 արարուածով և 9 պատկերով. Թարգմանութիւն ֆրանսերէնից (Ա. Դիւմայի թարգմանութիւնից) Ե. Լալայեանց: Թիֆլիզ, տպարան Մ. Դ. Ռոտինեանց և ընկ. 1886:

ՈՒՂԵՑՈՅՑ գործնական գինէգործութեան: Գրեց Կ. Կ. Մելիք Շահնազարեանց, պատկերազարդ: Թիֆլիզ, տպարան Մ. Վարդանեան, 1887:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ վերալի Սիրոյոյ: Գրեց Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան: Կ. Պոլիս, 1887:

ՈՒՍՈՒՄՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ տարրական: Յօրինեց Եղիշէ Ծ. Վարդապետ Այվազեան: Կ. Պոլիս, տպարան Գ. Պաղտատլեան (Արամեան) 1886:

ՍԱԼԻՈՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ, Նկարագիր ուղեւորութեան. Արտատպած Նոր-Դար լրագրից, փոփոխութիւններով:

ՎԱՐԴ ԵՒ ՇՈՒՇԱՆ բանաստեղծութիւնք Տիգրան Ս. Շալճեան: Կ. Պոլիս, տպարան Նշան Կ. Պէրպէրեան, 1887:

ՎԷՐՆ (Ժիւլ). Ուղեւորութիւն չուրջ կլուսնով. պատկերօք ի ձեռնարանէն Ֆրանսայի. Թարգմանեց Բ. Մ. Պօզաճեան: Կ. Պոլիս, ի տպարանի Արեւելք լրագրի:

ՏԱՐԱԲԱՂԴՆ ՄՈՒՍԱ. Հեղինակութիւն Միս Էճուորթ անգլուհւոյն: Թարգմանեաց Օր. Նուարդ Յ. Էսայեան: Կ. Պոլիս. ի տպարանի Արեւելք լրագրի:

digitised by A.R.A.R.@

ՏԷՐ-ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆՑ. *Թիֆլիսեցւոց մտաւոր կեանքը։ Թիֆլիս, տպարան Յ. Մարտիրոսեան*, 1886։

ՏԷՐ-ՍԱՐԳԻՍԵԱՆՑ. *Դասագիրք գծագրութեան, երկրորդ տպագրութիւն, բարեփոխած և ճոխացրած։ Ալեքսանդրապոլ, Գէորգ Սանոյեանցի տպարան*, 1887։

ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ (Ֆօռթիւնէ). *Կէս բաժանում, վիպասանութիւն։ Թարգմանեց Կ. Ս. Խաթիւնեան։ Կ. Պոլիս, ի տպարանի Արևելք լրագրի*, 1886։

ՐԱՖՖԻԻ ԿԱՅԾԵՐ. *երկրորդ հատոր*. 1887. *Կեդրոնական գրավաճառանոցի*։

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ (Յ. Գ.). *Նախապատրաստական դասագիրք Աշխարհագրութեան*, 1887։

ՓԱԼԱԴԱՇԵԱՆ. *Տեղագրութիւն Կոստանդնուպոլսոյ և շրջակայից, զարդարեալ պատկերով Վոսփորի*, 1887։

ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ. *երգարան։ Աշխատասիրութիւն Ղազարոս քահանայ Յովսէփեանի։ Ս. Պետերբուրգ*, 1887։

ՕՆԷ (Ժորժ), *Վիպասան գաղղացի. Դարբնոցապետն կամ կենաց պայքարները։ Թարգմանիչ Բ. Մ. Պօզաճեան։ Հրատարակիչ Յ. Քրիստափորեան։ Կ. Պոլիս*, 1887։

# ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ

ԱԶԴ.—Առաջիկայ ձմեռուանից յօդուածս քաղուած ենք յընթացս հրատարակութեան գտնուող մատենէ մի, որ կը խօսի Հայկական Նախնի Մատենագրութեանց վրայ, եւ է երկասիրութիւն Մեծարգոյ Հեղինակի Պատմութեան Հայկական հին եւ նոր դպրութեանց։

*Ս. Յակոբ Մծբնայ և իր աշակերտները. — Իրեն ընծայուած Զգօն գիրք. — Յ.-Ս. Անտոնեանի և իր կարծիք այս գրոց վրայ. — Աֆրաատ, և Արևելեան սրբի բանասիրական կարծիք. — Իր անուամբ գտնուած ճառեր. — Գիտնականներու և նոյն ճառից. — Ժամանակ անոնց յօրինման. — Ասորի բնագիրն և հայերէնն. — Իրարու հետ համեմատութիւնք. — Հայ թարգմանութեան ժամանակը և արժէք. — Մատենախօսական տեղեկութիւնք.*

*Առանձինն քննադատութեան և մատենագրութեան արժանաւոր դժուար է անգամ արժանապէս որոշել Յակոբայ Մծբնացւոյ անուամբ գտնուած և մինչև ցայսօր մեզ հասած Զգօն գիրքը։*

*Մծբնայ սուրբ և մեծահռչակ հայրապետին ազգին, տոհմին և ցեղին վրայ այլևայլ կարծիք և առասպելք յուզուած են, ոմանք ազգական և հօրեղբօրորդի կոչելով զնա սրբոյ Լուսաւորչին, և այլք՝ չընդունելով այդ ազգականութիւնն. այսպիսի առասպելք նաև առ հինս եղած են. մերոց՝ այդ առհմականութեանն՝ թէ սրբոյ Լուսաւորչին, և թէ իրմով քրիստոնէական հաւատոց երկնապարգև ժառանգութիւնն առաջնոյ և վայելող և ազգին պատիւն փափաքելով յանձնել. այնպիսի նշանաւոր և եկեղեցւոյ*

digitised by A.R.A.R.@